«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ Fax: +374 10 564111 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1339

«09» 09 2021 թ.

«Հայր և Որդի Ջիլավյաններ» ՍՊ Ընկերության
տնօրեն՝ պարոն Վ.Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան,

Համաձայն 2021 թվականի փետրարի 19-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Հայր ԵՎ Որդի Ջիլավյաններ» ՍՊ /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքված շինանյութի գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» պայմանագրի Ձեր Ընկերությունը պարտավորվել է 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված թվով հինգ տեսակի ապրանքներ:

Պայմանագրով սահմանված վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մարտի 16-ին: Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 14.07.2021թ. գրավոր սահմանվել է նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 19.07.2021թ. ներառյալ, որի մասին Ձեզ պատշաճ ծանուցվել է: Սակայն, Ձեր Ընկերության կողմից մատակարարումը կրկին չի իրականացվել և պատասխանատու ստորաբաժանումը Ձեր կողմից բանավոր տեղեկացվել է ապրանքի մատակարումից հրաժարվելու մասին:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 19.02.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Կից ներկայացվում է պատասխանատու ստորաբաժանման գրությունը:

Առդիր 1 թերթ:

ՌԵԿՏՈՐ **Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ,0025, Երևան, Կորյունի փ.2, հեռ. 011-621000-216

թիվ ԱՊՎ/359

«5» 08 2021թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան» հիմնադրամի
ռեկտոր պարոն Ա. Ա. Մուրադյանին

Հարգելի պարոն Մուրադյան.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Հայր ԵՎ Որդի Ջիլավյաններ» ՍՊԸ - ի միջև 2021 թվականի փետրվարի 19-ին կնքված N «ԳՀԱՊՁԲ-2021/7-1-6-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում, վաճառողը պարտավոր էր պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ս/թ մարտի 16-ը ներառյալ մատակարարել վերը նշված պայմանագրում ներառված ապրանքները ըստ տեխնիկական բնութագրի և գնման ժամանակացույցի: Սակայն ընկերության կողմից ապրանքները մինչ օրս չեն մատակարարվել: Մասնավորապես 6-րդ չափաբաժին՝ սայլակ, չորս ականի – 20 հատ, 12-րդ չափաբաժին՝ բարձր ճնշման կարգավորիչներ (ռեդուկտոր) ԲԿՕ 504 – 5 հատ, 13 -րդ չափաբաժին՝ բարձր ճնշման կարգավորիչներ (ռեդուկտոր) բալոնների – 6հատ, 24-րդ չափաբժին՝ կոմպրեսորի հետադարձ փական – 12հատ, 25-րդ չափաբաժին՝ կոմպրեսորի շարժիչ – 5 հատ:

Պայմանագրային պարտավորությունների կատարման նպատակով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 14.07.2021թ. գրավոր սահմանվել է մատակարարման նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 19.07.2021թ. ներառյալ, և դրա մասին պատշաճ ծանուցվել է պայմանագիր կնքած Ընկերությանը, սակայն Ընկերությունը չի կատարել նոր ժամկետով սահմանված պարտավորությունները և բանավոր հրաժարվում է ապրանքի մատակարարումից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, խնդրում եմ ձեռնարկել միջոցներ խնդրի կարգավորման նպատակով:

Կից ներկայացված է 14.07.2021թ. գրության պատճենը:

Վարչության պետ՝ Ս.Գ.Բարոյան